



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ**

**14 փետրվարի 2012 թվական**

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7/1**

**ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 7-ԸՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ**

Մասնակցում էին՝ Երևանի ավագանու 42 անդամներ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին Երևանի քաղաքապետի տեղակալներ Վ. Նիկոյանը, Վ. Վարդանյանը, Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ Ն. Մարգարյանը, քաղաքապետի մամլո քարտուղար Շ. Մարգարյանը, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Ս. Մակարյանը, աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ջ. Առաքելյանը, անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա. Ամյանը, առողջապահության վարչության պետ Ա. Ուլիխանյանը, ֆինանսական վարչության պետի ժ/պ Վ. Արևշատյանը, կազմակերպական վարչության պետ Գ. Բաղդասարյանը, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Ա. Գևորգյանը, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Յու. Մամիկոնյանը:

Նիստին ներկա էին ՀՀ ՋԼՄ-ների ներկայացուցիչներ:

Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը նիստի մասնակիցներին տեղեկացրեց, որ Երևանի ավագանու «Բարգավաճ Հայաստան» խմբակցության անդամ Հրայր Հովսեփյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու կապակցությամբ ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի թիվ 1 արձանագրության համաձայն՝ ավագանու մանդատը տրվել է «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածու Բաղալ Գասպարյանին:

## ՕՐԱԿԱՐԳ

1. Օրակարգի նախագծի հաստատում:
2. Երևանի ավագանու յոթերորդ նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի կազմը հաստատելու մասին:
3. Շենգավիթ վարչական շրջանի Շահամիրյանների (նախկին Տյուլենին) փողոցի հ.10 հասցեում գտնվող շենքի չսեփականաշնորհված տարածքներն անհատույց օտարելու թույլատրություն տալու մասին:
4. Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին:
5. Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին:
6. Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին:
7. Գույք ընդունելու և «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու մասին:
8. Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 23-ի N356-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
9. Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի նոյեմբերի 26-ի N161-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
10. Նվիրատվություն տրամադրելու մասին:
11. Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություններ պատվիրակելու մասին:
12. «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպելու մասին:
13. «Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպելու մասին:
14. Երևանի քաղաքապետի 2012 թվականի 30-ի N666-Ա որոշման 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերի համապատասխանաբար «բ» և «ա» պարբերություններին համաձայնություն տալու մասին:

1. **ԼՍԵՑԻՆ** – Օրակարգի հաստատման մասին:

**ՈՐՈՇՎԵՑ** – Հաստատել Երևանի ավագանու յոթերորդ նստաշրջանի առաջին նիստի օրակարգը:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 42

դեմ – 0

ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

2. **ԼՍԵՑԻՆ** – Երևանի ավագանու յոթերորդ նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի կազմը հաստատելու մասին:

Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը հայտնեց, որ Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» և «Բարգավաճ Հայաստան» խմբակցությունների կողմից առաջադրվել են երկուական թեկնածուներ.

Սուրեն Ներսիսյան - «Հանրապետական կուսակցություն» խմբակցություն

Մանվել Ավետիսյան - «Հանրապետական կուսակցություն» խմբակցություն

Արմեն Հակոբյան - «Բարգավաճ Հայաստան» խմբակցություն

Զիվան Պողոսյան - «Բարգավաճ Հայաստան» խմբակցություն

**ՈՐՈՇՎԵՑ** – Հաստատել Երևանի ավագանու յոթերորդ նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 42

դեմ – 0

ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

3. **ԼՍԵՑԻՆ** – Շենգավիթ վարչական շրջանի Շահամիրյանների (նախկին Տյուլենինի) փողոցի հ.10 հասցեում գտնվող շենքի չսեփականաշնորհված տարածքներն անհատույց օտարելու թույլատրություն տալու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա. Ամյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** – Երևան համայնքի Շենգավիթ վարչական շրջանի Շահամիրյանների (նախկին Տյուլենինի) փողոցի հ.10 հասցեում գտնվող, Երևանի համայնքի

սեփականությունը համարվող շենքի տարածքներն անհատույց սեփականության իրավունքով օտարել դրանցում փաստացի բնակվող գոհված և հաշմանդամ ազատամարտիկների ընտանիքներին:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** - կողմ – 42  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

4. **ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա. Ամյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** - Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Երևանի Մ. Մելիքյան փողոցի հ.15 շենքի հ.37 բնակարանն (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 08.12.2011թ. հ.2829330 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Իննա Գալուստյանին:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** - կողմ – 42  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

5. **ԼՍԵՑԻՆ** - Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա.Ամյանը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամ Արա Մինասյանը և «Բարգավաճ Հայաստան» խմբակցության անդամ Արմեն Հակոբյանը:

Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը հարցերի վերաբերյալ տվեց պարզաբանումներ:

**ՈՐՈՇՎԵՑ** - Տալ համաձայնություն՝

Երևան քաղաքի Աբովյան պուրակին հարակից հատվածում «Մամարտ» ՄՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 06.05.2003թ. հ.1019368 վկայական) 970.0քմ մակերեսով հողամասից 349.28քմ մակերեսով հատվածը Երևան համայնքի սեփականություն հանդիսացող հարակից 349.28քմ մակերեսով համարժեք հողամասի հետ փոխանակելու համար:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** - կողմ – 42  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**6. ԼՍԵՑԻՆ** – Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա. Ամյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** – Տալ համաձայնություն՝

տարածագնահատման համաձայնեցված սխեմայի 6-րդ գոտում գտնվող և սեփականության իրավունքով Վաղինակ Անանյանին պատկանող Երևանի Կուրդինյան փողոցի հ.27/17 հասցեի 901.66քմ մակերեսով հողամասը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 06.12.2011թ. հ.2715344 վկայական), տարածագնահատման համաձայնեցված սխեմայի 7-րդ գոտում Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Դավթաշեն 4-րդ թաղամասի հ.51/2 հասցեում գտնվող 1174.46 քմ մակերեսով հողամասի հետ փոխանակելու համար:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** - կողմ – 42  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**7. ԼՍԵՑԻՆ** – Գույք ընդունելու և «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** – Երևանի քաղաքապետի տեղակալ Վ. Նիկոյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** – 1. Որպես նվիրաբերություն ընդունել Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող KLO 6770G մոդելի 249 հատ քաղաքային ավտոբուսները և դրանց պահեստամասերը (այսուհետ՝ Գույք)՝ Երևան քաղաքում հասարակական տրանսպորտի աշխատանքը կազմակերպելու պայմանով:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված Գույքը 4532815.3 հազ. դրամ ընդհանուր արժեքով ներդնել «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալում, որի դիմաց վճարումը կկատարվի ընկերության կողմից համապատասխան քանակությամբ բաժնետոմսերի թողարկման և Երևան համայնքի օգտին տեղաբաշխման եղանակով:

3. «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը լրացուցիչ 453281 հատ հասարակ (սովորական) բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով ավելացնել 4.532.810.000 դրամով՝ այն սահմանելով 4.597.810.000 (չորս միլիարդ հինգ հարյուր իննսունյոթ միլիոն ութ հարյուր տասը հազար) դրամ, որից հետո հասարակ (սովորական) բաժնետոմսերի ընդհանուր թիվը կդառնա 459781 հատ, յուրաքանչյուրը՝ 10000 դրամ անվանական արժեքով:

4. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել նվիրաբերության պայմանագրի կնքումը և Երևան քաղաքի ավագանու հաստատմանը ներկայացնել «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի փոփոխությունը:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 42  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**8. ԼՍԵՑԻՆ** – Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 23-ի N356-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** – Երևանի քաղաքապետի տեղակալ Վ. Նիկոյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** – 1. Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2012 թվականի բյուջեի մասին» N 356-Ն որոշմամբ հաստատված NN 2, 3, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար NN1-4 հավելվածների:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 42  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**9. ԼՍԵՑԻՆ** – Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի նոյեմբերի 26-ի N161-Ս որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զ. Առաքելյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** – 1. Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի նոյեմբերի 26-ի «Երևանի վարչական շրջանների ղեկավարներին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անհատական կազմերը հաստատելու մասին» N161-Ս որոշման 1-ին կետով հաստատված.

- 1) N5 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
- 2) N11 հավելվածում «Հովհաննիսյան Արմեն» բառերը փոխարինել «Հարությունյան Վրեժ» բառերով:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 42  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**10. ԼՍԵՑԻՆ** – Նվիրատվություն տրամադրելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զ. Առաքելյանը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ** - Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամ Հրաչ Պողոսյանը:

Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը հարցի վերաբերյալ տվեց պարզաբանումներ:

**ՈՐՈՇՎԵՑ** - Սահմանել, որ Երևան համայնքի բյուջե աղբահանության վճար գանձելու լիազորություններն առավել արդյունավետ կազմակերպելու համար Երևան քաղաքի բյուջեից բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններին կարող է տրամադրվել վերջիններիս կողմից գանձված գումարների մինչև 10% չափով նվիրատվություն:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** - կողմ – 42  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**11. ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություններ պատվիրակելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զ. Առաքելյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** - «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և 19-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 5-րդ մասերով նախատեսված Երևանի քաղաքապետի լիազորությունները պատվիրակել Երևանի վարչական շրջանների ղեկավարներին:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** - կողմ – 42  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**12. ԼՍԵՑԻՆ** - «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպելու մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ** - Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամ Արա Մինասյանը:

Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը հարցի վերաբերյալ տվեց պարզաբանումներ:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության պետ Ա. Ուլիխանյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** - 1. «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպել առանձնացման ձևով՝ ստեղծելով «Սուրբ Աստվածածին» ծննդատուն, «Կարմիր Բլուր» պոլիկլինիկա և «Արշակունյաց» պոլիկլինիկա փակ բաժնետիրական ընկերություններ:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սահմանված կարգին համապատասխան ապահովել «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության վերակազմակերպման գործընթացի իրականացումը:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** - կողմ – 42  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**13. ԼՍԵՑԻՆ** - «Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության պետ Ա. Ուլիխանյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** - 1. «Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպել առանձնացման ձևով՝ ստեղծելով «Նոր Արեշ» պոլիկլինիկա», «Սարի թաղ» պոլիկլինիկա» և «Նուբարաշեն» պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերություններ:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սահմանված կարգին համապատասխան ապահովել «Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության վերակազմակերպման գործընթացի իրականացումը:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** - կողմ – 42  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**14. ԼՍԵՑԻՆ** – Երևանի քաղաքապետի 2012 թվականի 30-ի N666-Ա որոշման 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերի համապատասխանաբար «բ» և «ա» պարբերություններին համաձայնություն տալու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Յու. Մամիկոնյանը:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** - կողմ – 42  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանն առաջարկեց Երևանի ավագանու 7-րդ նստաշրջանի երկրորդ նիստը գումարել 2012 թվականի մարտի 16-ին, ժամը 11.00-ին:

Առաջարկն ընդունվեց միաձայն:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**